



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 07/18**

28.06.2018թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը (**այսուհետ՝ Կենտրոն**),

քննարկելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

Քաղաքացի Կարեն Լևոնի Ավագյանը (ներկայացուցիչ՝ Տ. Ղազարյան) 2018թ. փետրվարի 15-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով. «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության՝ «վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ գանգադրելով» ձևավորված պրակտիկան առ այն, որ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից Պատասխանողի վերաքննիչ բողոքը բավարարվելու դեպքում պետական տուրքի վճարման պարտականությունից Հայցվորն ազատված չէ, ճանաչել ՀՀ Սահմանադրության 39-րդ և 79-րդ հոդվածներին, Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասին, 60-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին հակասող»:

Դիմողի դիրքորոշումը հանգում է հետևյալին.

Դիմողը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը, ինչն իր հերթին, հետևանք է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված իրավական նորմի անորոշության, հակասում է ՀՀ Սահմանադրության 39-

րդ և 79-րդ հոդվածներին, ինչպես նաև Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասին, 60-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին:

Դիմողի կարծիքով՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության հիմքով պետական տուրքից ազատվելու հնարավորությունը հավասարապես տարածվում է նաև այն դեպքերի վրա, երբ հայցվորի պահանջը ՀՀ վարչական դատարանը բավարարում է, սակայն հետագայում այդ վճռի դեմ պատասխանողի կողմից բերված բողոքի արդյունքում այն բեկանվում է վերադաս դատական ատյանի կողմից:

Ըստ Դիմողի՝ վիճարկվող դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը խախտում է սեփականության սահմանադրական իրավունքը՝ անձի վրա դնելով պետական տուրք վճարելու պարտականություն այն դեպքում, երբ նման պարտականություն օրենքը չի նախատեսում:

ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմի 2018 թվականի մարտի 5-ի թիվ ՍԴԴԿՈ/1-7 որոշմամբ Կարեն Ավագյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ մասերի մասով մերժվել է, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործն ընդունվել է քննության:

Սահմանադրական դատարանում գործով դատական նիստը նշանակված է 2018 թվականի հուլիսի 10-ին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Լիովին համակարծիք լինելով Դիմողի հետ անհատական սահմանադրական դիմումում արտահայտված դիրքորոշումներում, կապված իրավական որոշակիության և սեփականության իրավունքի խախտման հիմնավորումների հետ, գտնում ենք, որ քննարկվող գործում անհրաժեշտ է գնահատել նաև անձի դատական պաշտպանության արդյունավետության և արդարադատության մատչելիության իրավունքի հնարավոր խախտումները:

Սույն գործով վիճարկվող դրույթների բովանդակությունը հետևյալն է.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ

կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության՝

Դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են.

թ) ...ֆիզիկական անձինք՝

- վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ բողոքներով:

Վիճարկվող դրույթների սահմանադրականությունը գնահատելու համար անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել դատարանում պետական տուրքի վճարման պարտականության և դրանից ազատված լինելու հետ կապված հարաբերությունները կարգավորող այլ իրավական դրույթները և դրանք ուսումնասիրել փոխադարձ կապի և հարաբերակցության մեջ:

Այսպես.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝

1. Դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Նույն օրենսգրքի 57-րդ հոդվածը սահմանում է.

1. Պետական տուրքի չափի, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու և դրա չափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Վարչական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 134-րդ հոդվածի 4-րդ մասի, 158-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ համապատասխանաբար, *հայցադիմումին, վերաքննիչ բողոքին և վճռաբեկ բողոքին կցվում են պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթեր:*

Ասվածը նշանակում է, որ ըստ ընդհանուր կանոնի՝ դատարանում հայցադիմում, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք ներկայացնելիս նախատեսված է պետական տուրք վճարելու պարտականություն, որի չափը, համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի, սահմանված է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով: Վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածն էլ կարգավորում է դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի, այդ թվում՝ պետական տուրքի բաշխման հետ կապված հարաբերությունները:

Այսպիսով, **ՀՀ օրենսդրությամբ սահմանված է վարչական դատարանում պետական տուրք վճարելու պարտականություն, որը բխում է ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասից, համաձայն որի՝**

...8. Յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, փուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Միաժամանակ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված է **պետական տուրք վճարելու պարտականությունից ազատելու հնարավորություն**, որի հետ կապված հարաբերությունները վարչական դատավարությունում կարգավորված են նույն օրենսգրքի 57-րդ հոդվածով, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21 և 22-րդ հոդվածներով, այդ թվում՝ վիճարկվող դրույթներով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ Պետական տուրքի գծով կարող են սահմանվել հետևյալ արտոնությունները՝

ա) պետական տուրքի վճարումից ազատում:

Նույն օրենքի 22-րդ հոդվածն էլ թվարկում է այն դեպքերը և սուբյեկտները շրջանակը, երբ դատարանում օրենքով սահմանված պետական տուրք չի գանձվում:

Այդ արտոնություններից է նաև սույն գործով վիճարկվող **«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերությունը, որի համաձայն՝**

Դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են.

թ) ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝

- վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ բողոքներով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք տուրքի վճարումից ազատվում են նաև դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:*

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության և նույն հոդվածի երկրորդ մասի բովանդակությունից հետևում է, որ **ֆիզիկական անձինք** վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշումները դատական կարգով վիճարկելիս ազատված են պետական տուրք վճարելու պարտականությունից, մասնավորապես՝

- հայցադիմում ներկայացնելիս,

- վերաքննիչ բողոք ներկայացնելիս,

- վճռաբեկ բողոք ներկայացնելիս:

Միաժամանակ, նշված հոդվածից հետևում է, որ, եթե հայցադիմում, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերողը ոչ առևտրային կազմակերպություն կամ ֆիզիկական անձ չէ, այլ **համապատասխան լիազորված (պետական) մարմին**, ապա վերջինս չի օգտվում այդ արտոնությունից և ազատված չէ պետական տուրքից:

Ընդ որում, ըստ օրենքի կարգավորման և իրավակիրառ պրակտիկայի՝ եթե առաջին ատյանի դատարանում **ֆիզիկական անձի ներկայացրած հայցը, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքը** մերժվում է, միևնույնն է, պետական տուրքի հարցը համարվում

է լուծված և հայցվորից պետական տուրք չի գանձվում, քանի որ վերջինս ազատված է պետական տուրք վճարելու պարտականությունից օրենքի ուժով:

Այն դեպքում սակայն, երբ վեճը լուծվում է պետական մարմնի օգտին վերջինիս վերաքննիչ բողոքի հիման վրա, ըստ իրավակիրառ պրակտիկայի՝ վերադաս դատական ատյանը ֆիզիկական անձի վրա դնում է պետական տուրք վճարելու պարտականություն, այն դեպքում, երբ, ինչպես արդեն նշել ենք, այդ անձն ազատված է պետական տուրք վճարելու պարտականությունից:

Հարց է առաջանում, թե արդյո՞ք այսպիսի մոտեցումը բխում է օրենքի վիճարկվող դրույթից և այն չի՞ հակասում արդյոք քննարկվող դեպքում պետական տուրքից ազատելու ինստիտուտի բովանդակությանը:

Ընդ որում, կարծում ենք, նման իրավակիրառ պրակտիկայի առկայությունն արդյունք է այն բանի, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության և նույն հոդվածի երկրորդ մասում չի հստակեցվում և որոշակի չէ, թե պետական տուրքից ազատելիս արդյո՞ք նշանակություն ունի, թե ով է ներկայացրել վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքը՝ ֆիզիկական անձը, թե՞ լիազորված մարմինը: Նշված դրույթներում օգտագործվող, համապատասխանաբար, «բողոքներով» կամ «բողոքների համար» եզրույթներից կարելի է անել երկակի հետևություն.

- կարելի է պնդել, որ ֆիզիկական անձն ազատվում է պետական տուրքից միայն այն դեպքում, երբ ինքն է ներկայացրել բողոքը, հակառակ դեպքում, եթե բողոքաբերը լիազորված մարմինն է, նշված արտոնությունը ֆիզիկական անձի համար չի գործում,
- կարելի է նաև պնդել, որ ֆիզիկական անձն ազատվում է պետական տուրքից անկախ բողոքաբեր սուբյեկտի կարգավիճակից, այսինքն՝ անկախ նրանից, թե ֆիզիկական անձը, թե լիազորված մարմինն է ներկայացրել բողոքը:

Մինչև նշված երկակիությանը կամ անորոշությանը անդրադառնալը, նախ, պետք է նշել, որ անհատական սահմանադրական դիմումով վիճարկվող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականությունն առ այն, որ նշված դրույթը չի նախատեսում պետական տուրքից ազատված լինելու հնարավորություն, կարծում ենք, խնդրահարույց չէ, քանի որ այդ հնարավորությունն արդեն իսկ նախատեսված է օրենսգրքի 57-րդ հոդվածում, որն էլ իր հերթին հղում է կատարում «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի վրա, որն էլ կարգավորում է քննարկվող հարցը: Ուստի, այս իմաստով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի իրավական որոշակիության խնդիր առկա չէ, քանի որ նույն օրենսգրքի այլ հոդվածներում և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում ամրագրված են համապատասխան դրույթներ:

Ինչ վերաբերում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության սահմանադրականությանը, ապա այս համատեքստում քննարկման առարկա պետք է դարձնել պետական տուրքի իմաստն ու նշանակությունը դատարան դիմելիս, ինչպես նաև դրանից ազատելու ինստիտուտի բովանդակությունն ու պետական քաղաքականության տրամաբանությունը:

Ընդհանրապես դատական ծախսերը կատարվում են դատական համակարգի պահպանումը և կանոնավոր գործունեությունն ապահովելու կապակցությամբ պետության կատարած ծախսերը հոգալու կամ վերականգնելու նպատակով: Այդ ծախսերի որոշակի մասն էլ ձևավորվում է պետական տուրքից:

Պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է («Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք, հոդված 2):

Այսպիսով, պետությունը պետական տուրք պահանջում է պետական մարմինների, տվյալ դեպքում՝ դատարանի լիազորությունների իրականացումը կազմակերպելու և ապահովելու ծախսերը հոգալու համար, իսկ քաղաքացին կամ իրավաբանական անձը վճարում է դատարանի «ծառայություններից»՝ արդարադատությունից օգտվելու համար:

Միևնույն ժամանակ, պետությունը օրենքով նախատեսել է սուբյեկտների և հիմքերի որոշակի շրջանակ, երբ դատարան դիմելիս որոշակի կատարողի անձինք որոշակի դեպքերում ազատվում են պետական տուրք վճարելու պարտականությունից («Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք, հոդվ. 22): Այդ սուբյեկտների կարգավիճակի և հիմքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ խոսքը հատկապես վերաբերում է այնպիսի դեպքերի, երբ պետական տուրք վճարելը կարող է որոշակի դժվարություն ներկայացնել որոշ անձանց համար՝ օրինակ, իրավունքների խախտման հետևանքով ֆինանսական միջոցներ չունենալու պատճառով (օրինակ՝ հայցվորները՝ հանցագործության հետևանքով իրենց պատճառված նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով կամ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման և աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով) կամ որոնց իրավունքները ենթադրաբար խախտվել են և որոնք վնասներ են կրել պետական մարմինների ոչ իրավաչափ գործողությունների կամ անգործության հետևանքով:

Օրենքով դատարանում պետական տուրքի գծով արտոնությունների սահմանումը, այդ թվում՝ նաև պետական տուրքի վճարումից ազատման հնարավորության նախատեսումը, անմիջականորեն բխում է **անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքից**: Այդպիսի արտոնության սահմանումը օրենքով նախատեսված դեպքերում կոչված է ապահովելու արդարադատության մատչելիությունը համապատասխան անձանց համար:

Առավել ևս, եթե անձի իրավունքների ենթադրյալ խախտողը պետական մարմինն է անձի նկատմամբ ոչ իրավաչափ վարչական պատասխանատվության միջոց

կիրառելու ճանապարհով, օրենքը սահմանել է իր նկատմամբ կիրառված վարչական պատասխանատվության միջոցի դատական վիճարկման հնարավորություն առանց պետական տուրք վճարելու պարտականության: **Այլ կերպ ասած՝ պետական մարմինների կողմից իրեն ոչ իրավաչափ վարչական պատասխանատվության ենթարկելուց դատարանում պաշտպանվելու համար անձն օրենքով ազատված է պետական տուրք վճարելու պարտականությունից՝ արդարադատության մատչելիության հիմնարար իրավունքի ուժով:**

Քննարկվող դեպքում պետական տուրքից ազատելու ինստիտուտի նպատակն այն է, որ անձը կաշկանդված չլինի որոշակի վճարումներ կատարելու պարտականությամբ իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքն իրացնելիս, մասնավորապես վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ բողոքներով:

Ընդ որում, այդ արտոնությունը անձի նկատմամբ գործում է (պետք է գործի) իր կամ լիազորված մարմնի կողմից հայցադիմում, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք ներկայացնելիս և անկախ գործի ելքից:

Մինչդեռ, իրավակիրառ պրակտիկան առ այն, որի շրջանակներում պետական մարմնի վերաքննիչ բողոքի բավարարման արդյունքում անձի վրա դրվում է պետական տուրք վճարելու (վճարված պետական տուրքը փոխհատուցելու) պարտականություն, չի բխում ինչպես պետական տուրքից ազատելու ինստիտուտի իմաստից և նշանակությունից, այնպես էլ արդարադատության մատչելիության իրավունքի բովանդակությունից:

Նման պրակտիկան, որը, ինչպես արդեն նշել ենք, նաև ոչ հստակ օրենսդրական կարգավորման արդյունք է, համահունչ չէ նաև իրավական որոշակիության սկզբունքին, քանի որ անձի համար կանխատեսելի չէ, թե ի վերջո պետական տուրքից ազատված լինելու՝ իր համար սահմանված արտոնությունը կգործի, թե՛ ոչ, քանի որ դա կախված կլինի, օրինակ, վերաքննիչ ատյանում պետական մարմնի վերաքննիչ բողոքի հիման վրա հարուցված վարույթի ավարտով: Այդ դեպքում անձը կաշկանդված կլինի իր նկատմամբ կիրառված վարչական պատասխանատվության միջոցը դատարանում վճարելիս՝ մտավախություն ունենալով, որ պետական տուրքից ազատված լինելու ինստիտուտն ի վերջո իր նկատմամբ կարող է և չգործել, քանի որ վերադաս ատյանում գործն իր օգտին չավարտվելու դեպքում դատարանն իր վրա դնելու է վճարված պետական տուրքը փոխհատուցելու պարտականություն:

Այսպիսով, դատարան դիմելու համար պետական տուրքի հետ կապված վիճարկվող իրավանորմի անորոշությունը դատարաններին հնարավորություն է տալիս **կամայականորեն, անկանխատեսելի և չափազանց հայեցողաբար** լուծելու պետական տուրքի հարցը, ինչն ինքնին հանգեցնում է անձի արդյունավետ դատական պաշտպանության և սեփականության սահմանադրական և կոնվենցիոն իրավունքների խախտման:

ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի համաձայն՝ Մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և

օրենքներին: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ փրկապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի¹ համաձայն՝ Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի² համաձայն՝ Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ Յուրաքանչյուր ոք, ում նույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ, եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ 1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ փրկապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք: ... 4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

Կոնվենցիայի 11-րդ արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրան գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

¹ 2015թ. խմբագրությամբ

² 2015թ. խմբագրությամբ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված «դատարանի իրավունքը» բացարձակ չէ և իր բնույթով պահանջում է ներպետական կարգավորումների առկայություն, որոնք կարող են որոշակի սահմանափակումների ենթարկել այդ իրավունքը (տե՛ս, *Z and Others v. the United Kingdom* գործով Եվրոպական դատարանի 10.05.2001 թվականի վճիռը, 91-93-րդ կետեր): Այս առումով դատական ծախսերի վճարման պարտականությունն ինքնին չի կարող դիտարկվել որպես դատարանի մատչելիության իրավունքի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ անհամատեղելի սահմանափակում (տե՛ս, *Kreuz v. Poland* գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, 60-րդ կետ): Եվրոպական դատարանի տեսանկյունից որոշ դեպքերում դատական ծախսերի բաշխման հետ կապված հարցերը կարող են նշանակություն ունենալ այն հանգամանքի գնահատման համար, թե դատավարությունն ընդհանուր առմամբ համապատասխանում է արդյոք Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին, թե՛ ոչ (տե՛ս, *Stankiewicz v. Poland* գործով Եվրոպական դատարանի 06.04.2006 թվականի վճիռը, 60-րդ կետ): Կոնվենցիան երաշխավորում է ոչ թե տեսական կամ վերացական, այլ գործնական և արդյունավետ իրավունքներ (տե՛ս, *Ait-Mouhoub v. France* գործով Եվրոպական դատարանի 28.10.1998 թվականի վճիռը, 52-րդ կետ): **Հետևաբար, դատական այն ծախսերը, որոնց վճարման պարտականությունն անձը կրում է ոչ թե դատարան դիմելիս, այլ դատական քննության ավարտից հետո, գործնականում նույնպես կարող են դիտարկվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համատեքստում՝ որպես «դատարանի իրավունքի» սահմանափակում** (տե՛ս, *Stankov v. Bulgaria* գործով Եվրոպական դատարանի 12.07.2007 թվականի վճիռը, 54-րդ կետ): Ընդ որում, «դատարանի իրավունքի» այդ սահմանափակման համապատասխանությունը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին ենթակա է գնահատման այն տեսանկյունից, **թե արդյոք այն հետապնդում է իրավաչափ նպատակ, և առկա է արդյոք ողջամիտ հավասարակշռություն կիրառվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև** (տե՛ս, *Apostol v. Georgia* գործով Եվրոպական դատարանի 28.11.2006 թվականի վճիռը, 57-րդ կետ):

Սույն գործով անձի դատական պաշտպանությունն արդյունավետ չի եղել. դատական պաշտպանության դիմելով՝ հայցվորը հայտնվել է առավել անբարենպաստ վիճակում, քան մինչ այդ էր:

Մասնավորապես, փորձելով դատարանի միջոցով վերականգնել իր սեփականության իրավունքը, որը խախտվել էր իր նկատմամբ ոչ իրավաչափ վարչական պատասխանատվության միջոց կիրառելու հետևանքով՝ հայցվորը ստիպված է գրկվել իր սեփականությունից՝ արտահայտված պետական տուրքի ձևով:

Այլ կերպ ասած՝ հայցվորի դատական պաշտպանությունը սույն գործով չի կարող արդյունավետ համարվել, քանի որ վերջինս վերջնական դատական ակտին

հասնելու համար ստիպված է կրել ավելի շատ վնասներ, որի կանխման համար նա դիմել էր դատական պաշտպանության:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականությունը խնդրահարույց չէ.
- «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության և դրա իրավակիրառ պրակտիկայի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը խնդրահարույց է:

Համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան